

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական ընթացք.— Հայ Թագաւորք (Պատկեր).— Դաշնակցականները.— Ազգային Սահմանադրութիւն.— Նամակ Ակեմ.— Վիճակագրութիւն Ամերիկայի Հայոց.— Այլևայլք:

ԻՄԻԵԳՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԿԱՆ ՆԻՋԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Հայքս ալ ուրախ ենք որ Ֆուանդա-
մենտ Նիճակակցութիւնը հաշտուած եղե-
լութեանց կարգն անցաւ: Կրնանք այժմ
բանաւոր յոյս տածել թէ քիչ ժամանա-
կէն, այսինքն ստարուան մը միջոցում, Օս-
մանեան Պետութիւնը կործանի և բաժ-
նուի Ռուսիոյ և Ֆուանդաի միջև:

Ֆուանդաի Հանրապետութեան Նախա-
գահին այցն ու փառաւորումը Ռուսիոյ
մէջ պիտի թողու կրթական մեծ տպաւո-
րութիւն ունա ժողովրդին վրայ, որ տե-
սաւ թէ Հանրապետութեան մը պարզ
նախագահն ալ կրնայ կայսեր մը պէս վեհ
լինիլ ու կայսեր մը հաւասարապատիւ:
Ֆուանդական Նիճակակցութիւնը ուրեմն
այս տեսակետով ալ գոհացուցիչ է քա-
ղաքակրթութեան բարեկամներուն: Ֆուան-
սա, Եւրոպիոյ ամենէն քաղաքակիրթ ազ-
գը, կրթիչը պիտի լինի Ռուսիոյ:

Հայքս Ռուսիոյ մեծնալուն և քաղա-
քակրթութեան մէջ կը փնտռենք ու պիտի


գտնենք մեր փրկութեանը կարեւոր մէկ
պայմանը, անո՛ր համար ի սրտէ կը խըն-
դակցինք երկու մեծ ժողովուրդներուն
լծակցութեանը վրայ և կը մաղթենք լի-
ուելի յաջողութիւն:

Ըստ ՄՇԱԿԻ՝ իբրև 50,000 Հալ գաղ-
թած է Տաճկաստանէն ի Կովկաս հայկա-
կան ջարդերէն ի վեր: Անոնցմէ ոմանք՝
թշուառութենէ ստիպուած սկսած են վե-
րադառնալ իրենց բնավայրն:

Մեր Ազգային Սահմանադրութեան
պատմութիւնը մասնաւորապէս հետաքր-
քրական է և նոր սերնդին մէջ քիչ ծանօթ:
Ներկայ թուով հրատարակելով անոր նա-
խաբանական մասերն՝ կարեւոր անուններ
և իրողութիւններ ծանօթացուցած պիտի
լինինք մերայնոց: Այս հրատարակումն
անելու առիթ եղաւ մեզ երբ Ուսթրէն գրեց
մեզ թղթակից Ա. թէ Հայր Մաշթոց կ'աշ-
խատի Ամերիկայի Հայ գաղթականութեան
ազգային կազմակերպութիւն մը տալ՝ հե-
տեւելով Սահմանադրութեան ընդհանուր
գծերուն:

ԱՆԳԼԻԵՐԷՆ ՀԱՅՔԻ ՄԱՍԻՆ

Անգլիերէն ՀԱՅՔԻ հրատարակու-
թիւնը կախակայուած է տնտեսական
պատճառներով:



ՀԱՅ ԹԱԳԱՆՈՐԷ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐ

Դաշնակցական կոչուած Հայ երիտասարդներու խմբակը նորէն սկսեալ է իւր շահատակութիւններն: Պանքայի դէպքին ժխտական և աղետալի հետեանքէն բան մը չէ սովորած խմբակը: Նոր բան սովորելու ալ ընդունակ չ'երևիր. միայն եռանդ մը, մանաւանդ թէ եւք մը կը զգայ խռովութիւն յարուցանելու, և այդ նպատակաւ ռումբ կը նետէ: Ռմբարկութեան հետեանօք ո՞վ կը ջարդուի աւելի, թշնամի՞ն թէ մեր եղբայրները. դորա պատասխանը անցեալ դէպքերէն ունինք արդէն:

Ի՞նչ է այս ռմբարկութեան նպատակը: Պատասխան տուէք, Պարոն Դաշնակցականներ. դուք պարտաւոր էք պատասխանելու:

Վրէժ լուծել կ'ուզէք արդեօք: Բայց ձեր աշակցութեամբ մեռցուած եղբայրներու վրէժը ձեզ չէ անկ պահանջել, և վրէժ լուծելու ձեր այդ կերպը նոր ոճի մ'է յոճի բարդուած: Միթէ նորագոյն ջարդեր ստեղծելով կը կարծէք հին ջարդերուն վրէժն առնուլ:

Ձէ', վրէժխնդրութիւն չէ այլ միայն եւրոպիոյ ուշադրութիւնը հրաւիրել ի դատն Հայ ժողովրդեան որ կը տառապի, կը ջնջուի տակաւ — այդ է ձեր նպատակը, թերևս պատասխանէք:

Ո՛չ նուազ խօսական միջոց առ այդպիսի նպատակ: Ո՞ր տէրութեանց ուշն կ'ուզէք հրաւիրել. Փռանսայի՞, Անգլիոյ՞: Փռանսական Հանրապետութեան Նախագահն Փռայտ մ'ի բեղերպուրկ է, Ամենայն Ռուսաց Կայսրին հիւրն է, և անշուշտ երկու պետքն, ինչպէս իրենց Արտաքին Գործոց Նախարարք, պիտի խորհրդակցին Արևելեան Խնդրոյն լուծման կամ առժամեայ յետաձգման հնարաւոր կերպերուն վրայ. պիտի յիշուին Հայերն, թերևս անոնց անհուն թշուառութեան ալ հարեանցի ակնարկութիւն մը լինի. բայց ի՞նչ կը կարծէք Դուք, Դաշնակցական Պարոնայք, ձեր ռումբերու ազդեցութիւնը ի՞նչ կը լինի Նախագահ Փռայ վրայ, որոյ, Բարիզէն մեկնելու պահուն՝ ետեէն ռումբ մը պայթեցաւ, և Ջարին վրայ, որ նոյնպիսի ռումբերէ կը վախէ իրաւամբ: Կը խնդրեմ քիչ մը լրջացէք, զգոնացէք: Ձեր

ռումբերով դուք զձեզ անարքիստներու ընկեր կանէք, այսինքն Ռուսիոյ, Փռանսայի և այլ Տէրութեանց ղեկավարներուն ամենագարշելի թշնամեացն ընկեր: Դուք Հայութիւնն կ'արատաւորէք անոր ընծայելով անիշխանական միտումներ, զի դուք ոչ թէ անծանօթ քանի մը անհատ էք, այլ «Հայոց Յեղափոխական Դաշնակցութիւնն» կը կոչէք զձեզ, որպէս թէ բազմաճղի և լայնածաւալ գոյութիւն մ'ունենայիք Հայ ազգին մէջ:

Միթէ այնքան դժուար չ'ուի էք որ հաւատաք թէ ձեր քանի մը ռումբերու միջոցով պիտի վախցնէք տէրութիւններն և պիտի ստիպէք զիրենք Հայոց դատն արդարութեամբ տեսնելու: Աստուս, ձեր ռումբերն զգուանք միայն կ'ազդեն, ոչ թէ երկեղուկ, և առ մերայինս զգացուած քիչ մը զթութիւնն ալ կը պաղեցունեն:

Թերևս ուրիշ բան ունիք դուք ի մտի: Դուք յեղափոխական էք, ընկերվարական, և ունիք նոյն իսկ անիշխանական միջոցներու համակրութիւն, կը հաւատաք քաղաքական ոճի օրինաւորութեանն, և ուխտեալ էք յանուն և ի փրկութիւն Հայ ազգին յարատեւել ձեր գործում, այսինքն յեղափոխութեան գործում, և եթէ տեսնէք թէ յեղափոխութիւն գործելու հնար չկայ, հայ ժողովուրդը ուժասպառ է և արիւնքամ և զինաթափ, և եթէ ազդն զարհուրած և գրեթէ կիսամեռ՝ խնդրէ պահիկ մի շունչ և հանգիստ առնուլ, դուք այդ բոլոր պարագաներուն հակառակ պէտք է անոր գոչէք «քալէ՛, ժողովուրդ», և եթէ նա չքալէ, դուք ռումբ պիտի նետէք և պիտի կարծել տաք թէ Հայ ժողովրդի զգացումն կ'արտայայտէք այդու: Այսպէսով դուք ձեր բարձր կոչումին հաւատարիմ մնացած, ձեր ուխտը յարգած, ձեր արհեստը շարունակած կը լինիք, փոյթ չէ թէ ձեր այդպէս անելովն Հայաստան աւելի շուտ սպառի և չիք լինի:

Դուք գիտցած լինիք, Պարոն Դաշնակցականներ, և դուք Պարոն Հնչակեաններ, և դուք այլ ինչ և իցեականներ որք այդ խաղերը կը խաղաք, գիտցած լինիք թէ ոչ միայն ես, մի խմբագիր, այլ այս թերթի ընթերցող հազարաւոր Հայեր կը դատապարտեն զձեզ իրեւ մոլոր և ազգակործան գործիչներ, և եթէ այսօր հնար լինէր Հայ ժողովրդին կարծիքն հարցնել Հայաստանի մէջ, պիտի ձայնակցէին ամենքը զձեզ ազգին չարարարները հռչակելու:

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

Բարձրագոյն Դուռն,
Տեսչութիւն Արտաքին Գործոց,
Թուահամար 191

Առ Խոհեմազարդ Տեղապահ Պատրիարքի:

Խոհեմազարդ և Սիրելի Էֆէնտի.

Բարեկարգութեանց վերաբերեալ Կայսերական հրովարտակը կը պահանջէ, որ ամեն Հասարակութիւն իր վայելած առանձնաշնորհութիւններն ու արտօնութիւնները որոշեալ պայմանաժամի մէջ ի բնին առնելով, ժամանակին բերմանցը և քաղաքակրթութեան արդեանցն ու գիտութեանց պահանջած բարեկարգութիւնները խորհրդածութեամբ որոշէ ու Բարձրագոյն Դուռն ներկայացնէ. և Հոգեւորական Գլխոց շնորհուած իշխանութիւնն ու ձեռնհասութիւնը՝ իւրաքանչիւր Հասարակութեան ապահովուած վիճակին ու նոր գիրքին հետ համաձայնութեան մէջ գրուի: Ուստի Հայոց ազգին համար պատուաւոր անձերէ բաղկացեալ Յանձնաժողովի մը ձեռք Սահմանադրութեան ուրուագիծ մը պատրաստուեցաւ: Բայց միանգամայն պատշաճ համարուեցաւ որ Սարգիս Պատրիարքի օրով կազմուած Ընդհանուր Ժողովոյ եկեղեցական անդամներն ու թաղական երեսփոխանները՝ քուէից առաւելութեամբ եօթն Հոգիէ բաղկացեալ Յանձնաժողով մը ընտրեն, և վերոյիշեալ ուրուագիծը անգամ մըն ալ անոր ցոյց տըրուի: Վասնորոյ կը խնդրեմք որ պէտք եղած հրաւերինամակները երկու երեք օրուան մէջ ղրկելով յիշեալ Յանձնաժողովին ընտրութիւնը ընել տայ, և անոր Բարձրագոյն Դուռը միւս Յանձնաժողովին ու այս գործիս համար յատկապէս որոշուած Պաշտօնակալին հետ մէկտեղելովը հարկ եղած տնօրէնութեան կատարուելուն շնորհ ընէք: Կը խնդրեմք նաև որ վերոյիշեալ կերպով ընտրուած եօթն անձանց անունները յառաջագոյն մեզ ուղարկէք:

1862 Փետրվար 14 (Ստորագրեալ)

Ալի

Բարձրագոյն Դուռն Յանձնաժողովոյն և Ազգային Յանձնաժողովոյն առ Կայսերական Կառավարութիւն մատուցած Յայտագրին օրինակն է:

Կայսերական Տէրութիւնը՝ ի վաղուց անտի իր արդարասէր հովանաւորութեան ներքեւ գտնուող զանազան Ազգաց Կրօնից ազատութեան և առտընին գործոց մասնաւոր վարչութեան համար առանձնաշնորհութիւններ ու արտօնութիւններ շնորհած է:

Այս արտօնութիւնները թէպէտև ըստ սկզբանց ամեն ազգաց համար միօրինակ, բայց միանգամայն ամեն մէկուն կրօնական սեպհական կանոնաց և սովորութեանց համեմատ տնօրինուած ըլլալով, իւրաքանչիւր Ազգ զանոնք իր բնիկ սովորութեանց և ընթացից համեմատ ի գործ դնելով վայելած է:

Հայոց ազգը միւս ազգաց պէս մինչև ցայսօր Պատրիարք մը ունեցած է, որ Տէրութեան կողմէն իբր նախագահ Պատրիարքական վարչութեան ճանչցուած է, և Ներկայացուցիչ Ազգին ու Միջնորդ գործադրութեան Կայսերական հրամանաց. և որ ի վաղուց անտի Հասարակօրէն եկեղեցական դասէն ընտրուած է, Ազգին զանազան կարգի անհատներէն բաղկացեալ Ընդհանուր Ժողովի մը ձեռք:

Պատրիարքը իր պաշտօնին մէջ՝ որ է Ազգին նախագահել և անոր օգտիցը հսկել, Ազգին Ընդհանուր Ժողովոյ միջնորդութեամբ ունեցած ազդեցութենէն ու վերատեսչութենէն բնաւ մէկ ժամանակ ազատ եղած չէ, և ասոր ապացոյցն է Պատրիարքին ամեն ժամանակ Ընդհանուր Ժողով հրաւիրելն ու գումարելը, և կամ ըստ պահանջման գործոց կամ Բարձրագոյն Դուռն բացորոշ մէկ հրամանին վրայ կարեւոր խնդրոյ մը ծագած ատենը՝ Ընդհանուր Ժողովոյ դիմելն ու անոր որոշումը խնդրելը:

Հայոց Ազգը՝ ասկէ քսան տարւոյ չափ յառաջ՝ Կայսերական Տէրութենէն խնդրեց որ Պատրիարքարանի մէջ Պատրիարքին նախագահութեամբը երկու ժողով հաստատուին. մէկը Կրօնական, միւսը՝ Քաղաքական գործոց համար. որպէսզի պատրիարքին պաշտօնատարութեանը գործակից և օգնական ըլլան, և Ազգին թէ ըստ քաղաքականի թէ ըստ Կրօնականի՝ վաղեմի կանոններէն և սովորութիւններէն որ և է

խոտորմանց առաջըր առնուի:

Երբ այս ժողովները հաստատուեցան, ազգային մանրամասն գործոց տնտեսութեան համար ալ՝ քանի մը խորհուրդներ հաստատել հարկ եղաւ:

Բայց որովհետեւ Ազգային պաշտօնատեարց ամեն մէկուն իշխանութիւնը և պարտաւորութիւնները որոշաբար սահմանուած չէին, յայտնի էր որ Ազգին վիճակը բարեկարգելու մասին եղած այս քանքերը, Ազգային Վարչութեան գանազան մասանց մէջ, նաև յիշեալ Վարչութեան և Ազգին մէջ՝ անպակաս պառակտումներ ծագելուն առիթ պիտի տային, և աս ալ ամեն կողման վերաբերեալ իրաւանց գործադրութեան մասին շատ մը անկարգութիւններ և Ազգային Վարչութեան մէջ ալ շփոթութիւն և խռովութիւն պիտի պատճառէր:

Ահա այս շփոթութեանց և երկպառակութեանց պատճառները վերցնելու, և ամեն կողման պահանջմանց վնասակարութիւնը բառնալու նպատակաւ, Կայսերական Տէրութիւնը իր բոլոր հպատակաց վերայ ունեցած հայրական խնամօքը՝ Ազգիս մէջէն Խառն Յանձնաժողով մը կազմել հարկաւոր դատեց, սրպէս զի Հայոց Ազգին Կրօնական և Քաղաքական բնիկ սովորութեանց, նաև ի վաղուց անտի ընդունուած ընթացքին համաձայն Սահմանադրութիւն մը պատրաստուի:

Ա՛րդ խառն Յանձնաժողովը պատշաճ կը դատէ որ վաւերացման համար Բարձրագոյն Դրան մատուցած Սահմանադրութեան ուրուագծին համեմատ՝

Ա. Պատրիարքին ի մէջ Տէրութեան և Ազգին միջնորդ ըլլալու պաշտօնը ըստ առաջին գրութեան մնայ:

Բ. Ընդհանուր ժողովոյ կազմութիւնը առաջինէն աւելի կանոնաւոր կերպիւ նորոգուի: Եւ Ազգային երեսփոխանները էսնաֆներէն ընտրուելու տեղը (ըստ որում էսնաֆներուն վիճակը նոյնը չէ ինչ որ առաջ էր), Յունաց Ազգին մէջ գործադրուած եղանակէն գուցէ աւելի կանոնաւոր և օրինաւոր կերպով՝ Եկեղեցեաց ժողովուրդներէն (այսինքն թաղերէն) ընտրուին:

Եւ որովհետեւ դուրսերը բնակող Հայ ժողովուրդները իրաւամբ կը գանգատին թէ Պատրիարքարանի որդուներուն խորհրդակցութենէն և մասնակցութենէն բո-

լորովին զուրկ են, Երեսփոխաններուն մէկ մասը գաւառներուն կողմէն ընտրուին. և Կոստանդնուպոլսոյ թաղերուն երեսփոխանաց վրայ աւելցուին: Եւ ժողովոյն Կրօնական մասը այսինքն անդամոց քսանը՝ Կոստանդնուպոլսոյ գտնուող Եկեղեցականներուն կողմէն ընտրուին, որով Ընդհանուր ժողովոյ անդամոց թիւը ընդ ամենը հարիւր քառասունի կ'ամփոփուի:

Ասոնց պաշտօնը տասն տարի տեւէ, և ամեն տարի տասներորդ մասը փոխուելով նորէն ընտրութիւն ըլլայ:

Ընդհանուր ժողովը անուանէ թէ Գլատրիարք և թէ անոր նախագահութեամբը գործող Ազգային երկուց ժողովոց անդամները, և անոնց գործողութեանց վերապահութիւն ընէ:

Գ. Կրօնական գործոց տեսչութիւնը՝ Կրօնական ժողովոյն, քաղաքական գործոց տեսչութիւնը՝ Քաղաքական ժողովոյն, և խառն գործոց տեսչութիւնն ալ՝ յիշեալ երկու ժողովներուն մէկտեղ գալովը կազմուած Խառն ժողովոյն վերաբերեալ ըլլայ:

Դ. Կրօնական և Քաղաքական ժողովները իրենց ձեռնհասութեան շրջանակին մէջ գտնուած թէ Եկեղեցեաց ժողովուրդներուն (թաղականներուն) և թէ Եկեղեցեաց, դպրատանց, հիւանդանոցաց, վանօրէից և ասոնց նման ուրիշ տեղեաց ազգային գործերուն ամենն ալ Տեսուչ և Թաղական խորհուրդներու միջնորդութեամբ տնօրինեն:

Ե. Վարչութեան կեդրոնը Ազգային Պատրիարքարանն ըլլայ:

Պատրիարքը՝ իբրև պաշտօնական Գլուխ Պատրիարքարանի, թէ Ընդհանուր ժողովոյն և թէ Ազգային կրկին ժողովներուն նախագահութիւն ընէ. և Ազգին ուղղակի կամ անուղղակի վերաբերեալ ամեն գործերը տնօրինէ՝ ընդ վերապահութեամբ Ընդհանուր ժողովոյ:

Զ. Գաւառական ժողովրդոց Վարչութիւնը Կեդրոնական Վարչութեան հետ կապուած ըլլայ: Իւ գաւառներուն մէջ Առաջնորդները նախագահութիւն ընեն տեղական ժողովներուն, որոնք պիտի կարգադրուին ըստ տրամադրութեանց Կոստանդնուպոլսոյ ժողովոց, և նոյն (տեղական) ժողովոց գործերն ալ տնօրինեն:

Է. Գաւառական ժողովները՝ կեդրոնական Վարչութեան, և սոյն վարչութեան խորհուրդներուն ամեն մէկը՝ որ ժողովոյն վե-

րաբերի՝ նոյն ժողովոյն, և Ազգային ժողովները՝ Ընդհանուր ժողովոյն և Պատրիարքը մէկ կողմէն կայսերական Տէրութեան և միւս կողմէն (Ընդհանուր ժողովոյ միջնորդութեամբ) Ազգին պատասխանատու ըլլան:

Ը. Եւ որովհետեւ կայսերական Տէրութիւնը Հայոց Ազգին համար տալու հրամաններուն գործադրութեան բնական միջնորդ և Ազգային Վարչութեան գլուխ Պատրիարքը կը ճանչնայ և անոր կ'ուղղէ իւր հարցումները, եթէ Տէրութիւնը Պատրիարքին հրամայէ որ հարցած խնդրոյն վրայ իր (այսինքն Պատրիարքին) կարծիքը յայտնէ, Պատրիարքը՝ իր նախադաշնութեամբը գործող ժողովներուն որոշման համեմատ շարժի: Իսկ եթէ Ազգին կարծիքն առնելով Տէրութեան հաղորդել հրամայէ, այն ժամանակ Պատրիարքը Ընդհանուր ժողով հրաւիրէ, և այն ժողովոյն վերջնական որոշումները յայտնէ Տէրութեան:

Թ. Ազգային վարչութիւնը երեք տեսակ պարտաւորութիւն ունի. որոց առաջինն է առ կայսերական Տէրութիւն. այս է՝ Ազգը կատարելապէս հաւատարիմ հպատակութեան մէջ պահել, և Ազգին թէ ընդհանրապէս և թէ իմասնաւորի ամեն մէկ անհատներու իրաւանց և արտօնութեանց՝ Տէրութեան կողմէն պահպանութիւնը ապահովցնել: Երկրորդն է առ Ազգն, որ է ճշմարտապէս գթութեամբ և հայրաբար վարուիլ: Եւ երրորդն է առ Աթոռն Էջմիածնի. այն է՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ կրօնական կանոնաց և զրինաց համեմատ վարուիլ:

Ահա՛ ասոնք են Սահմանադրութեան այն կէտերը զոր Խառն Յանձնաժողովը պատշաճ կը դատէ. և զոր կը հաստատէ միւս Յանձնաժողովը, որ Զեր Վսեմութեան հրամանին համեմատ՝ ի դիմաց Ազգին Սահմանադրութեան վրայ իր դիտողութիւնները Բարձրագոյն Դրան ներկայացնելու համար կազմուեցաւ:

Ի Կ. Պօլիս 16 Փետրվար 1862

Ստորագրութիւնք

Անդամք Բարձրագոյն Դրան

Յանձնաժողովոյ

Ստեփաննոս Եպիսկոպոս Նիկոմիդիոյ,
Տեղապահ Պատրիարքական Աթոռոյ Կոս-

տանգնուպօլսայ

Յովհաննէս Վարդապետ Կապուտիկեան

Յովհաննէս Քահանայ Փափազեան
Իւսկիւտար Ս. Խաչ Եկեղեցւոյ

Յովհաննէս Քահանայ Հիւնքեարպէ-
յէնտեան Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ ի
Պալատ

Գէորգ Երամեան

Սերովբէ Վիչնեան

Յակոբ Մուպաշեան

Յովհաննէս Եղիազարեան

Յովհաննէս Տատեան

Դրիգոր Աղաթօն

Յակոբիկ Նորատունկեան

Գասպար Կիւմիւշճի

Անդամք Ազգային Յանձնաժողովոյ

Աղաթօնեան Մկրտիչ

Աւանեան Ստեփան

Մանուկեան Մանուկ

Մինասեան Մինաս

Ռուսինեան

Սուրէնեան Յովհաննէս

Օտեան Դրիգոր

Օրինակ Հրամանագրի Բարձրագոյն

Դրան

Առ Խոհեմազարդ Տեղապահ Պատրի-
արքի Հայոց

Հայոց պատրիարքարանի վիճակին և Վարչութեան բարեկարգութեանը վրայօք ասկէ առաջ Բարձրագոյն Դուռը կազմուած Յանձնաժողովին գրի առած Սահմանադրութիւնը՝ լոկ աշխարհական գործոց վերաբերեալ քանի մը կէտերը սրբազրուելէն ետքը, Վեհափառ Արքային մատուցուեցաւ և Նորին Կայսերական Վեհափառութեան կողմէն ընդունուելով, պարունակած նիւթերուն այսուհետեւ կանոն բռնուիլը Զեր Սրբազնութեան յանձնելու Արքունի հրամանը շնորհուեցաւ:

Ուստի յիշեալ Սահմանադրութիւնը ներփակեալ առ Զեզ ուղարկելով՝ կ'պատուիրեմ որ պարունակած նիւթերուն այսուհետեւ անթերի գործադրութեան հսկելով, ըստ Բարձրագոյն կամաց Օգոստոսփառ Կայսեր՝ ինչ որ պարտ ու պատշաճ է, ի գործ դնելու հոգ տանիք:

17 Մարտ 1863

ՆԱՄԱԿ ԱԿՆԵՆ

Ակն, 20 Յուլիս

Հոս Միսիօնարաց ձեռքով հաստատուած Որբանոցին մէջ հիմայ իբրև 40 որբ կայ: Այս թիւը 100ի հասցնելու համար մայր ունեցող որբերէն ալ պիտի առնուի:

Ազգայինք գաղտնի կը թշնամանան այս հաստատութեանը դէմ: Տէր Մուշեղ որ որբոց Յանձնաժողովոյ անդամ է, կը խրատէ և կը յանդիմանէ որ որբ չտան որբանոցին, խոստանալով որբերն ղրկել ի Կ. Պոլիս հարուստներու որդեգրութեան համար:

Որբ աղջիկները բարձի երեսներ շինել սկսած են, խիստ պատուական:

Ամէն բան աժան է. ցորենը, իւղը ևն., բայց դրամ չկայ և առևտուր չի լինիր: Հոս խանութպաններէն ոմանք նոր տեսակ մը ապրանք կը ծախեն, որուն վրայ դուք թերևս գաղափար չունիք, այն է, չմնաց, չկայ, չուրիք:

Գաղթականութիւնը կը շարունակուի. հիմայ միացորդին միացորդը մնաց. քարերէն որդիք Աբրահամու պէտք է յառնեն գործի համար: Հրդեհէ գերծ մնացած հայ տուններն որ առաջ 300—500 լիրայ կարծէին, հիմայ 50 կամ 100 լիրայի կը ծախուին:

Վերի եկեղեցիին կանանց բաժինին վրայ գէշ պատուածքներ կան. այս խարխուլումներու նորոգութիւնը շատ ստակի կարօտ է. սիւնները այրեր են, և միակտուր քարերն կիսով չափ կոտորներ թափեր են: Վարի եկեղեցին բաղդատաբար քիչ վերանաւորած է. և գործածութեան համար ալ սա յարմար է. երկու կողմէն բաժնեցին կանանց յատկացուցին, և դասին առջևն ալ քշիկ մի տեղ այր մարդոց թողուցին (այդ քշիկն ալ շատ է, զի այր մարդու սղութիւն կայ). գմբեթը անձրեւէն կը կաթէ. վրան տախտակամած ընել ուղեցինք, բայց կառավարութիւնը արգիլեց. Վիլայէթէն հրամանի կը սպասուի:

* * *

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՄԵՐԻԿԵՅԻ ՀԵՅՈՑ

Փրօվիտէնս. Providence, R. I.

Գաղաքիս Հայ գաղթականութեան ընդհանուր թիւը 450 է, անուանք արձանագրուած լինելով տուժարի մէջ. յիսու-

նի չափ ալ թերևս առանձին սենեակներու մէջ ընկելով մոռցուած են:

35 տուն Հայ ընտանիք կան այժմ քաղաքիս մէջ որոնք գաղթած են Պօլսէն, Խարբերդէն, Տիգրանակերտէն, Բալուէն: Իդական սեռի թիւը գրեթէ կը հաւասարի 40ի:

Այս գաղթականութիւնը կազմուած է հետևեալ գաւառներէ:

300 մարդ Խարբերդցի

100 » Բալուցի

100 » Պօլսեցի, Կեղեցի, Սեբաստացի, Կիւրինցի, Մուշեցի, Խնուսցի և Տիգրանակերտցի:

Վունսաքէթի Հայ գաղթականութեան թիւը կը բաղկանայ 74 անձերէ:

Սէնթրլ—Ֆօլսի Հայ գաղթականութեան ցանկի մէջ 3 տուն Հայ ընտանիք գտնուիլն կ'երևի թէ տեղեկագրողն մոռցած է:

Ի մօտոյ ձեզ պիտի տեղեկագրեմ քաղաքիս Հայոց կեանքն ու կացութիւնը:

Ա. Յ. ՏԵՐՈՅԵԱՆՑ

ԵՅԼԵԻԵՅԼԻՔ

Լոնտոն, Օգ. 20—Թապրիլէն կը հեռագրեն թէ երէկ Բրդերը արշաւեր են ի Սալմաստ գաւառն, Թուրքընդ Պարս սահմանագլխոյն վրայ: Բակ ու քանդ են արեր երկու Հայ գիւղեր, և կոտորեր են երկու հարիւր անձ, քրիստոնեայ և միւսիւման անխտիր: Պարսից կառավարութիւնը որոշած է աւելի զօրք յղել ի վայրն:

Կ. Պոլիս, Օգ. 19—Վեց հոգի ձերբակալուեցան հոս իբրև հետևանք ռումբերու պայթմանը որ տեղի ունեցած էր երէկ: Բանտարկեալներն Հայ են և ամենն ալ անշուշտ պիտի գլխատուին: Մեծ վէճիւրին պաշտօնատան մէջ տեղի ունեցած պայթումը կեսարացի Հայու մը գործն է: Իւր ձեռքը վնասուած էր պայթումէն: Ոստիկանութիւնը մեծ եռանդով կը խուզարկէ հայ թաղը ի խնդիր ուժարկուաց մեղսակիցներու, և փողոցները զօրաց և ոստիկանաց հսկողութեան տակ են:

Լոնտոն, Օգ. 22—Կ. Պոլսէն հեռագիրք ինչ կը ցուցնեն թէ Հայ յեղափոխականաց սպանալիքները անհանգստութիւն կը պատճառեն: Կ'ասեն նաև թէ Հայոց Պատրիարքը եպերած է ուժարկուներուն գործը, և Սուլթանին խոնարհ և յորդաբան չքմեղանքներ մատուցեր է: Պատրիարքին մէկ շրջաբերականը, որով ուժարկուներն յանցապարտ կը հռչակուին, այսօրբոլոր Հայ եկեղեցեաց մէջ կարդացուեցաւ:

Դաշնակցականներն չըջարեալան մը յղած են դեսպանաց՝ ծանուցանելով թէ որոշած են իրենց ազգային ցաւոց դարմանը ձեռք բերել՝ ի գործ դնելով լիովին այն ծրագիրը որոյ առաջին ծայրն միայն էր անցեալ 1896 տարւոյն Օգոստ. 26ի դրամատան դէպքը:

Կ. Պոլիս Օգ. 24—Կայսերական իրաւէ մը ելեր է որ Թոքատի կոտորածին գործիչներուն մահուան վճիռը կը փոխէ ցկեանս չղթայական աշխատութեան ի Տրիպոլիս կամ ի Պէրպէրիստան:

Բարիզ, Օգ. 25—Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ բանտերն խնդուած են Հայերով և ազատական Թրքերով որք կասկածանօք ձերբակալուեր են: Անցեալ Կիւրակի օրը այս բանտարկելոց ութսունը նետուեցան Կալաթիոյ ստորերկրեայ գնտանը:

Կ. Պոլիս Օգ. 25—Թուրք ոստիկանք երէկ ձերբակալեցին երկու Հայ երիտասարդուհի որք Հայոց կեդրոնական Յեղափոխական Յանձնախմբին յայտարարութիւնները կը բաշխէին որով կը ծանուցանէին թէ վերջին ումարակութիւններն երիտասարդ Թուրք կուսակցութեան գործնէին: Այս երիտասարդուհեաց մին՝ Ռուսակատակ գտնուելով՝ արձակուեցաւ բանտէն:

Բարիզ, Օգ. 29—«Մէմորիալ Տիրքումագիք» թերթը կ'աւել թէ Աֆղանիստանի էմիրն հրամայեր է հաւատացելոց կազմ և պատրաստ լինիլ նուիրական պատերազմի մը համար, և թէ մոլլաներու ժողով մը կոչուած է ի Գապուլ կացութիւնը քննելու համար:

Պազէլ, Օգ. 29.—(Հրէից) Սիոնասէրներու համաժողովն բացուեցաւ հոս այսօր: Եւրոպիոյ այլ և այլ կողմերէն 200 պատուիրակ ներկայ էին: Ի միջի այլոց նկատողութեան պիտի առնուի ծրագիր մը որոյ համեմատ Պաղեստին գնուի և հոն հաստատուին Հրէայը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ OUR TROUBLES IN ASIA.

(2 Corinthians, I. 8)

A Story of Persecution

By

SARKIS H. DEVIRIAN

A native Armenian Pastor.

1897, pp. 183.

Հեղինակի հասցէն է—258 Washington St.,
Binghamton, N.Y.

Գրքի գինն է մէկ տոլար:

Հայքի ներկայ թուոյ մէջ հրատարակուած «Հայ Թագաւորաց Պատկերն» յիշեալ գրքին մէջ գրուածին օրինակն է:

Ե. ԵՒ Մ. ԳԱՐԵԿԷՍԻԱՆ

71 WALL STREET

NEW YORK

Տունը կը վաճառէ օսմանեան ոսկով փոխանակազիր Կ. Պոլսոյ վրայ: Քաղաքէն հեռու գտնուողը կարող են դրամը ղրկելով փոխ-գիրը ստանալ:

Փոխ-գիր կը տրուի մեծ թէ փոքր գումարներու համար, ի տես վճարելի:

Հասցէ—

A. & M. KARAGHEUSIAN,

71 Wall Street,

New York, N. Y.

ԵԿՈՒՅՑԻ ՄԵՍԻՆ

SIEGEL · COOPER Co.

SIXTH AVENUE 18th & 19th STS. NEW YORK.

Պատիւ ունինք յարգոյ Հայ հասարակութեան ծանուցանել թէ մենք վերոյիշեալ տիեզերահռչակ մեծ վաճառատան առաջին յարկին վրայ յատուկ տեղ մ'ունինք ուր արուեստական ակուաներ կը շինենք ու կ'ընծայենք մեր յաճախորդներուն, թէ հատով, թէ վերի շարքը ամբողջ, թէ վերի ու վարի ծնօտներու ակուաները միասին: Մեր շինածը ամենալաւ, ամենազիւմացկուն տեսակէն է: Այն Հայ Տիկիւնները ու Պարոնները որ անգլիերէն լաւ չեն խօսիր, պիտի գտնեն մեր քով դիւրութիւն, վասն զի մեզի օգնական ունինք հայ ատամնաբոյժ մը: Վերի ծնօտի ամբողջ շարքը ութ տոլարով կը շինենք, վարինն ալ ութ տոլարով: Մեր գները յոյժ չափաւոր են, ու գործը յոյժ ընտիր:

E. P. HAYES, D. D. S.

ՀԱՅՔ

ՀԵՆՐԻԿ ՆԻՍԵՄԱՆԵՅ

Տարեկան բաժնեգիրն է կանխիկ երկու տոլար (տասն ֆրանք)

Հասցէն է

M. S. GABRIEL, M. D.

341 West 23rd St., New York.

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Խ. Ս. ԳԱՐԵՐԻԷԼԵԱՆ